## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ք. Չարենցավան** **22.06.2023թ**

Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովի նիստին ներկա են ավագանու անդամներ Արսեն Խլղաթյանը ,Վարդան Մակինյանը, Գևորգ Գևորգյանը, Նարեկ Բաբայանը, Անահիտ Խեչոյանը, Սահակ Բաղդասարյանը: Նիստին ներկա չէ ավագանու անդամ Տարոն Եփրեմյանը: Նիստին ներկա են համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը , համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մուրադյանը, քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանը:

Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը անցկացրեց հերթական նիստը, որի ընթացքում հանձնաժողովի նախագահ Արսեն Խլղաթյանը առաջարկեց քննարկել 2023 թվականի հունիսի 28-ին կայանալիք Չարենցավան համայնքի ավագանու նիստին ներկայացվող օրակարգային ներքոնշյալ հարցերը: Զեկուցողներ՝ Ս.Վարդանյան և Բ.Բալբաբյան:

**Օրակարգում՝**

1. **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:**
2. **Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:**

**Լսեցին՝**

1. Ս.Վարդանյանը ներկայացրեց Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին քաղաքացիների դիմումները:Վերջինս ներկայացրեց դիմած քաղաքացիների անունները և բնակարանների հասցեները:

Ավագանու անդամ Վ.Մակինյանը խնդրեց մանրամասն ներկայացնել դիմած քաղաքացիների կողմից ներկայացված փաթեթները:Հանձնաժողովի անդամները ծանոթացան քաղաքացիների գործերին : Սառիկյանների սեփականություն հանդիսացող բնակարանների հետ կապված հնչեցին մի շարք հարցեր :

Քանի որ հարցերի պատասխանները չբավարարեց հանձնաժողովի անդամներին , միաձայն առաջարկությամբ որոշվեց վերջինիս հարցը հետաձգել՝ ավելի մանրամասն հետազոտելու համար:

Լսեցին՝

2.Բ.Բալբաբյանը զեկուցեց օրակարգի 2-րդ հարցի մասին,որը վերաբերվում է սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:Այն է՝ ներկայացված հողատեսքի նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:

Նարեկ Բաբայանի այն հարցին , թե արդյոք հողատարածքը կօգտագործվի այն նպատակով, ինչի համար պետք է կառուցվի , Բ.Բալբաբյանը պատասխանեց՝ քանի որ նախաձեռնությունը իրականացնելու համար ֆինանսավորելու է պետությունը, վերջիններս էլ հետևողական են լինելու, որպեսզի հողատարածքը այլ նպատակների համար չօգտագործվի:

Հանձնաժողովի անդամները տվեցին իրենց համաձայնությունը առաջարկվող նախագծի իրականացման գործընթացին:

**Նախագահ՝** **Արսեն Խլղաթյան**

**Քարտուղար՝** **Գևորգ Գևորգյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը 2023 թվականի հունիսի 28-ին կայանալիք նիստին ներկայացվող նորքոնշյալ որոշման նախագծի քննարկմանը տվեց դրական եզրակացություն:

1. **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:**
2. **Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:**

Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները 2 (երկու) տարի ժամկետով , անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու՝ համաձայն Սառիկյանների դիմումի՝ որոշվեց վերջինիս հարցը հետաձգել,ավելի մանրամասն ուսումնասիրելու նպատակով:

**Կողմ- 6** **դեմ-0** **ձեռնպահ-0**

**1.Վարդան Մակինյան**

**2.Գևորգ Գևորգյան**

**3.Արսեն Խլղաթյան**

**4.Անահիտ Խեչոյան**

**5.Նարեկ Բաբայան**

**6.Սահակ Բաղդասարյան**

Վերնոնշյալ մյուս հարցերին տրվեց դրական երզրակացություն.

Կողմ- 4 դեմ-0 ձեռնպահ-2

1.Վարդան Մակինյան

2.Գևորգ Գևորգյան

3.Արսեն Խլղաթյան

4.Նարեկ Բաբայան

1.Սահակ Բաղդասարյան

2.Անահիտ Խեչոյան

Նախագահ՝ Ա.Խլղաթյան

Քարտուղար՝ Գ.Գևորգյան

22.06.2023թ.